




ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՅ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԽԻՆ 43




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ԽԻՆ



ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 42 || 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903



ՄԵՂԹԱՆՔ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Ա. Ո.

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԸ ՂԱԶԻ

Դարձեա՛լ ողջոյն քեզ, ո՛ր մեծ Օ՛ր,
Որ մեզ ծնար մեծ քաղաւոր,
Թաղաւորաց մեջ լուսամբս,
Խանը Ղազի Սուլթան Համիս :

Ազգ ու Ազիմի ելիք հանդես,
Իի՛ր փառքերուն ականասես,
Ի մեծ պատիւ այս պերճ Աւուր՝
Ոյր կը տօնուի Դարձն ամենուր :

Եւ դու, Մամուլ բիրալեզու,
Սաղմոսերդ քու ալելու,
Տարփողելով այն մեծ օրին
Յիշատակը՝ հետ հանուրին :

Իսկ դու, Քերդո՛ղ, առ փու փնար
Հոգեսաւիդ ու ւրսալար,
Երգերովդ ա՛րկ ի համար,
Մէն մի արարն իւր բարեբար:

Քերդո՛ղ, նե՜սէ դուն փու երգեր,
Որպէս հովին անուշ սիւֆեր,
Որպէս աղբերց լուսակարկաչ
Ջինջ ալեկունքն հեզահառաչ:

Թոչին գնան թող այնք անգին
Պասմել ամպին, ծաղկին, մարգին,
Յիշատակներ մեծվայելոչ
Հանդեսներուն աս ւրսառուչ:

Թուրքիոյ Տեր միահեծան,
Դրօճներ, հողմածածան,
Հանուրց հօր մը Աջն հովանի,
Որդւոց վերայ սարածանի՛:

Առասանա՛յ կեանքին արեւ,
Յովմունքն ըլլան Շնորհաց բարեւ,
Առաս որքան ծառոց սերեւ
Լոյս շողայ մեր գլխոց վերեւ:

Տօն Ծնունդին իւր բարեբախտ
Պերն վաստակօք միշտ բազմեբախտ,
Վերադառնա՛յ ամեն տարի,
Ու աւե՜սէ նոր նոր բարի:

Կեցցե՛ ապա Սուլթան Համիտ,
Նախարարօքն իւր վեհամիտ,
Տորմիզովն ու բանակներով
Հանդիսանա՛յ բազմակարով:

Հպատակացդ հաւատարիմ
Ա՛յս են մաղբանք իւր ջերմագին,
ԿԵՅՅԵ՝Ս, յաւե՛ս, ո՛ ՏԷՐ ԱՐՔԱՅ,
Մեծ փառքդ ըլլայ մեր Ապագայ:
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԱՌԱՇԱՆՆԵՐ ՈՒ ԱՌԱԿՆԵՐ

Թէ ո՛ր աստիճան մեծ կարեւորութիւն մը ունեցած են առակները, բաւ է ըսել թէ՛ Աստուածաշունչի մեր Ս. Թարգմանիչ Հայրերն իսկ նախ Առակաց գիրքը թարգմանել սկսած են:

Եւ արդարեւ շատ աղէկ ըսած է Ռիվարով. Առակները ժողովրդոց փորձառութեանց պնդումներն են, եւ իբրեւ ամէն դարերու ուղիղ բանը՝ (bon sens) բանաձեւերու վերածուած:

Պ. Գիրգարտ, շատ հմտօրէն կ'բացատրէ երբ կ'ըսէ թէ Առակներու, Առածներու ծագումն հասնելու է մինչեւ աշխարհի առաջին դարերուն: Յորմէ հետէ մարդիկ անդիմադրելի բնազդով մը զօրացած, եւ, կրնանք ըսել, Արարչին ամենակարող կամքովը մղուած, ընկերութիւն կազմեցին, յորմէ հետէ իրենց պէտքերը բացատրելու բաւական լեզու մը հաստատեցին, առածները կամ առակները ծնունդ առին: Անոնք ան ատեն կ'կայանային պարզ ու պարզամիտ ինչ ինչ բանաձեւերու մէջ, նման իրենց սովորութեանց, որոնց արդիւնքն ու ճառագայթումներն էին: Եթէ անոնք մեզ հասած ըլլային իրենց նախնական ձեւով, առաջին ընկերութեանց զարգացման ամէնէ աւելի հետաքրքրական յիշատակարանները պիտի հանդիսանային, եւ պիտի ձգէին սքանչելի լոյս մը քաղաքակրթութեան պատմութեանը վրայ, որուն չուկտը պիտի նշանակէին անվիճելի ու անհերքելի հաւատարմութեամբ: Ս. Գիրքին Եկեղեցապատումը կամ Իմաստութեան գիրքը որ նախնի օրերու իմաստնոց վրայ ձեւուած ըլլալու է, կ'ըսէ՝ « Իմաստունը խելամուտ ըլլալու է առածներու գաղտնիքներուն, և պէտք է որ սնանի առակներու մէջ զանխուլ թանգուզուած բաներովը »: Յունաստանի Եօթն Իմաստասէրներն եւ Պիլթագորոս Իմաստութեան գրքին մտածումն ունեցած են: Սոկրատ և Պլատոն առակներու հաւաքածոներ կազմեցին իրենց գործածութեան համար: Արիստոտել անոնց հետեւեցաւ եւ իր աշակերտներն ալ՝ Կղէարգոս եւ Թէոփրաստէս՝ իրենց կողմանէ իրենց վարպետին օրինակն ի գործ դրին: Քրիստոս եւ Գլէանթոս Ստոյիկեանները միեւնոյն աշխատութեամբ զբաղեցան: Բոլոր այս փիլիսոփաները կ'նկատէին այս առակներն իբրեւ մնացորդն այն լեզուին որ առաջին մարդոց կրթութեան համար գործածուած էր, և զոր Վիգօ աստուածներու լեզուն կ'կոչէ: Առակներու ձեւին ներքեւ էր որ քուրմերը խօսեցուցած էին պատգամները, օրէնսդիրները տուած էին իրենց օրէնքները, իմաստունները ու գիտունները

համառոտած էին իրենց վարդապետութիւնները եւ իրենց փորձառութիւնը :

Գիտենք թէ Հռովմայեցւոց մէջ Կատոն երէց որքան կ'սիրէր ու կ'որոնէր առակները : Աւելի ետքերը՝ երկու քերականներ , Զենոբիոս եւ Դիոգինէոս , որ Ադրիանոս կայսեր օրով կ'ապրէին , իրենց աշխատութեան առարկայ ըրին եւ բազմաթիւ առածներ հաւաքեցին : Մի եւ նոյն շնորհն ու պաշտպանութիւնը վայելեցին առակները նաև Միջին Դարու մէջ , եւ խնամօք ուսումնասիրուեցան իմաստասէրներէ եւ գիտնականներէ : Արոսդուլիոս , Երազմոս , եւ Ադրիակոս Յունիոս աշխատեցան յաջորդաբար ժողովելու եւ իրարու հետ միացնելու բոլոր այն առածները որք ցրուած էին Յոյն ու Լատին հեղինակներու մէջ , Յովսէփ Սկալիկէր հրատարակեց Յունաց սակաւաւոր ոտանաւորները : Անորէ Սգոդ՝ հին Հելլենացը եւ Նոր Կտակարաններունը . Մարտին տէլ Րիո՝ Աստուածաշունչինը . Նովարիկոս Եկեղեցւոյ Հայրերունը . Ժան Ուրոնոս՝ Եբրայեցիներունը : Արաբաց եւ Պարսից առակներէն շատերը լատիններէն թարգմանուեցան Սքալիկէրի , Էրբիկէոսի եւ Լէվիկոս Վարնորոսի կողմանէ : Այն առակները որք Իտալիոյ , Ֆրանսիոյ , Գերմանիոյ , Անգլիոյ մէջ ընթացք ու գոյութիւն ունեցած էին , ունեցան իրենց հասկաքաղները : Ան ատեններէն ի վեր եւրոպական բոլոր ժողովուրդներն ունեցան իրենց մի եւ նոյն սեռի հաւաքածոները : Մեր գրականութեան նախնի և նորենի հայրերն ու հեղինակներն ալ խնամօք հաւաքեցին ժողովրդային բուն ոգին ու ընկերական դէմքեր ներկայացնող ու գծագրող սոյն օրինակ առակներն ու առածները , եւ վերջին դարուս մէջ անոնցմէ շատեր հրատարակուեցան այլ եւ այլ բանասիրաց կողմէն :

Երբ խնամօք դիտենք առակաւոր լեզուին յաջորդական տարբերութիւններն ու փոփոխումները՝ ժողովրդոց մտքին բոլոր երևումները (phase) պիտի կրնանք որոշել : Ամէն թուական ունի իր տիրող կարծիքները , որք ժողովրդական բանաձեւերու կ'դառնան , եւ դարու մը առակները կ'բացատրեն անոր եղանակները , սովորութիւնները , եւ մասնաւոր սկզբնականութիւնը որ զայն կը տարբերէ ուրիշ դարէ մը : Ժողովուրդ մը փոխելով իր յատկութիւններն կամ մոլութիւնները կ'փոխէ նաև առակները . եւ աս կ'բացատրէ թէ ինչո՞ւ առակներն երբեմն թեր ու դէմ կ'իստին :

Առակներուն մէջ պէտք է նշանակել ընդհանուր ճշմարտութիւն մը , որ կ'վերաբերի ամէն ժամանակներու եւ ամէն տեղերու , եւ որ կ'մնայ միշտ մի եւ նոյնը , հակառակ փոփոխումներու եւ յեղաշրջումներու , եւ մասնաւոր ճշմարտութիւն մը որ կ'վերաբերի դարու մը կամ գրեթէ շատ մը դարերու : Առաջինը կ'ըս-

վանդակէ տիեզերական կերպով մը ամբողջ մարդկութեան միտքը եւ երկրորդը կ'համառօտէ այս կամ այն ժողովուրդին միտքը, ժամանակին գոյնով եւ ցեղային դիմագծութեան նիշերովը: Այն առաժներ որ տիեզերական զգացումներ կ'բացատրեն, կ'գտնուին միշտ եւ ամէն տեղ, մի եւ նոյն է անոնց խորը ամէն ժողովուրդոց քով, թէեւ միայն կ'փոխուի անոնց ձեւը, եւ ասկէ հաւատալ պէտք է թէ զանոնք ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդէ առած չէ, այլ անոնք ինքնածին են ամէն ազգերու մէջ, մի միայն հասարակաց ուղիղ բանով կամ բնական ուղղամտութեան լուսովը: Ձեւին տարբերութիւնը կ'թուի ապացուցանել թէ անոնք թարգմանուած չեն: Այն առաժներն որք հիմնուած են մասնաւոր կարծիքներու վրայ եւ տեղական սովորութեանց վրայ, չեն դուրս ելներ գրեթէ այն երկրէն ուր ծնած են, վասն զի չպիտի հասկըցուէին արտաքոյ այն միջավայրին եւ այն պարագաներուն որք զանոնք ներշնչած են: Ասոնք տեղածին բոյսեր են, որք պիտի կորսնցնէին հոտն ու համը կլիմայ փոխած ատեն:

(Շար.)

ԱՐՄԷՆ

ԳԱՇՏԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Ես գիտեմ դաշտային տուն մը, կէս-դարվեր հովիտէն: Արահետը մարգագետիններու՝ դուռը կ'առաջնորդէ, անսխալ. ճերմակ ճակատը կանանչ փեղկերուն կը պահուըտի ծառերու ետին: Բնաւ փայլուն ծաղկոց, ո՛չ շատրուան, ոչ հազուագիւտ ծաղիկներ. բայց պարտէզ ու մրգաստան, գարունին, լեցուն են բոյներով ու թռչուններու գեղգեղներով: Արշալոյսէն ի վեր ու ամբողջ օրը, երգակցութիւն մը կայ թեւաւորներու փոքրիկ ձայներու. ամէն մէկ ծառ, մէն մի մացառ՝ կը թնդայ: Արեւը խոնարհելուն, ամէնքն ալ կը լռեն՝ թողելու համար իրիկունը իր լռութեանը մէջ: Մի՛ միայն, պայծառ գիշերները, թմբիկն կեռնեխը լռեցնել կուտայ իր ուժգին ու թափանցող ձայնը՝ սրինգի մը պէս. էգը պառկած իր հաւկիթներուն վրայ, մտիկ կ'ընէ հիացիկ, կէս մը քնացած:

Սարեակներ՝ թմբիկն մէջը, կարմրալոյսներ՝ ցանկին մէջը, չիկահաւներ՝ ուռենիներուն մէջ, ճնճղուկներ՝ րազեղին ներքեւ հին պատին, ճուղեցէ՛ք զուարթօրէն, քնացէ՛ք խաղաղ:

Տղաքները սպիտակ տունին՝ չպիտի յափշտակեն ձեր ձագերա՛մները: Անոնք կը գուրգուրան իրենց պզտիկ բարեկամներուն

վրայ. ամէն օր, անոնց համար կը ցանեն, դրան առջեւ, հատիկները ցորենին ու փշրանքները ճաշին: Իւրաքանչիւր ապրիլի, ամէն մարդ սոխակին կ'սպասէ: Թո՛ղ սիրուն ու նազելի ծիծեռնակն ալ՝ դայ շինել իր տունիկը՝ եզերքը տանիքին, հերձաքարին առջեւի կողմին վրայ, հաճութեամբ ընդունուի պիտի:

Օրհնութեամբ տուն, երջանի՛կ տղաներ, բոյնե՛ր զուարթ երգերու: Մի՛ մօտենաք, դո՛ւք, հրացանով մարդ՝ դո՛ւ՝ ամենեւին տգէ՛տ ու վայրագ դպրոցական, քու թակարդներովդ, քու ոստղափայտերովդ, քու տգեղ վաճակովդ: Թո՛ղ մէկը չի դայ բերել տխրութիւնն ու վախը հոս՝ ուր համակ կեանք է, եւ ուրախութիւն, եւ վստահութիւն:

Թրգմ. ՎԱՀՐԱՄ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՇԱՐԼ ՏԵԼՈՆ

ՊՂՆՁԷ ՏԱՆՈՅԾ ՄԸ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Հ Է Դ Ե Ա Թ)

Փողերանոցի մը մէջ — տեղ մը ուր ստակներ կը շինուին — սեղանի մը վրայ ոսկի դրամ մը եւ պղինձ տասնոց մը կային ուրիշ չափ մը կտորուանքներու հետ խառնուած, որոնք կը չողային արեւին ոսկեփայլ ճառագայթներուն տակ: Օր մը ոսկին տասնոցին այսպէս խօսեցաւ. « Դո՛ւն ալ բան մը կ'արժե՞ս, հեռո՛ւ, զատուէ՛ ինձմէ: Դուն անշուշտ անչա՛հ պղինձէ շինուած ես որ արժանի չէ արեւին ճառագայթներուն տակ փայլելու: Պահ մը վերջը պիտի սեւնաս, պիտի ժանգոտիս ու չպիտի գտնուի մէկն որ իր քովը պահել ուզէ: Բայց ես թանկագին մետաղ եմ, շինուած եմ, հետեւաբար պիտի ճամբորդեմ աշխարհիս շատ մը կողմերը առեւտրական մեծամեծ գործեր տեսնելու »:

Խեղճ տասնոցը ամօթէն չկրցաւ բառ մ'իսկ արտասանել:

Մի եւ նոյն սենեակին մէջ, վառարանին քով նստած էր ծերուկ՝ բայց խելացի կատու մը. սա երբ լսեց ոսկի դրամին բողոր ըսածներն, սկսաւ երկայն պիտերը լըջօրէն գգուել, կամաց մը տապալկեցաւ ու մեղմօրէն սա խօսքերը մոլտաց.

« Մըռ, մըռ, մըռ, շատ կարելի

Որ հակառակն ատոր լինի : »

Եւ յիրաւի, այս երկու ստակի կտորներուն ճիշդ հակառակը պատահեցաւ՝ ինչ որ ոսկի դրամն ըսած էր : Ոսկին կծծի ազահ մարդու մը ձեռք անցաւ որ առաւ զայն ու նետեց իր դրամարկղին մէջ, ուր սպասեց ան շատ մը տարիներ՝ ուրիշ բազմաթիւ ոսկեդրամներու հետ՝ սեւցած, ծոյլ ու անգործածելի : Օր մ'ալ, կծծին հիւանդացաւ խոր ծերութեան մէջ. մեռնելու պահուն իր ունեցած բոլոր ոսկիները ծածուկ տեղ մը թաղեց, որպէս զի իր ժառանգորդներէն մէկը չկրնայ գտնել : Հպարտ ոսկի դրամը կը մնայ հոն մինչեւ հիմա, սեւցած, ժանգոտած եւ չկայ մէկը որ գիտնայ անոր թաղուած տեղն ու զայն հանէ : Բայց միւս կողմէն պղնձէ տասնոցը ճամբորդեց աշխարհի շատ մը կողմերն ու շատ մը բարիքներու պատճառ եղաւ :

Ահա իր պատմութիւնը :

Աս անարգուած պղնձէ տասնոցն առաջին անգամ փողերանոցը աւելող տղու մը տրուած էր : Սա տուն տարաւ տասնոցն, և որովհետեւ իր քոյրը շատ կը ցանկար նոր ու փայլուն տասնոցներ ունենալ, անոր տուաւ զայն : Փոքրիկ աղջիկը՝ չկրնալով զսպել զգացած ուրախութիւնը, դուրս՝ փողոց վազեց փայլուն տասնոցն իր ընկերակիցներուն ցուցնելու : Բայց երբ վազելով կ'երթար, խեղանդամ մուրացիկ մը պատահեցաւ իրեն և խնդրեց որ կտոր մը հաց տայ ուտելու : Բարի ու գթասիրտ աղջիկն հաց չունէր որ տար, բայց այնչափ ցաւ զգաց անոր նկատմամբ որ մէկէն հանեց տասնոցն ու աղքատին տուաւ ըսելով. « Գնա՛, քեզի համար հաց առ ասով » : Խեղճ մուրացիկը շնորհակալ եղաւ աղջկան ու գնաց հացագործի մը խանութ, որուն մօտերը տեսաւ իր ծանօթներէն մին որ ճամբորդի հագուստներ հագած՝ նստած էր ճամբուն վրայ : Նա նշանաւոր մարդոց ու կիներու պատկերներ կը վաճառէր տըղոց : Մուրացիկը իր հին բարեկամին մօտենալով անոր ուր երթալն հարցուց. « Ես, պատասխանեց ուղեւորը, հեռո՛ւ, շատ հեռու, Ամերիկայի մէջ քաղաք մը պիտի երթամ, ուր եղբայրս տարուած է վայրենի Հնդիկ գլխաւորի մը կողմէ : Ա՛հ, հոն պիտի երթամ, որպէս զի սա հաւաքած ստակս Հնդիկին տալով եղբայրս ազատեմ : Եւ այդ պատճառաւ է որ կը ծախեմ այս պատկերները » : Մուրացիկը՝ որուն սիրտը ճմուռած էր այս խօսքերէն, պղնձէ տասնոցն ուղեւորին ձեռք դրաւ ըսելով, « Ա՛ռ այս իմ պղտիկ նուէրս ալ. բարին Աստուած զիս պիտի հոգայ » : Հացագործը՝ որ այս սրտաճմլիկ խօսակցութիւնը լսած էր, կանչեց մուրացիկն ու « տասնոց » նկանակ մը տուաւ անոր որ ուտէ :

Քանի մը օր յետոյ ուղեւորը ճամբայ ելաւ։ Շատ մը քաղաքներէ, գիւղերէ, լեռներէ ու ծովերէ անցնելէ վերջ, հասաւ վերջապէս այն քաղաքն ուր գերի տարուած էր եղբայրը։ Հընդիկին մօտեցաւ որուն քով կը ծառայէր գերին, ու տուաւ անոր ունեցած բոլոր ստակն — ահագին գումար մը — եւ խնդրեց որ եղբայրն ազատ արձակուի, բայց իր բոլոր ջանքերն ապարդիւն մնացին, որովհետեւ Հնդիկն աւելի դրամ կը պահանջէր։ «Աւա՛ղ, բացազանչեց ուղեւորն, ուրիշ ստակ չունիմ, բայց միայն սա պղնձէ տասնոցը զորս թշուառ մուրացիկ մը տուաւ ինձ, սրտի փափուկ զգայնութենէ մը դրոյւած։ Դուն ալ, բարի ու գորովաբեր եղիր անոր պէս ու Աստուած քեզ պիտի վարձատրէ»։ Հնդիկը մուրացիկին պատմութիւնն որ լսեց, սիրտը շարժեցաւ ու ազատ արձակեց անոր եղբայրն։ Եւ տուաւ նաեւ բոլոր ստակները բացի մուրացիկին տասնոցէն զոր իր կուրծքին վրայ գտնուող մէկ գրպանին մէջ պահեց։

Այս դէպքէն գրեթէ ամիս մը վերջ, Հնդիկը պատերազմի գնաց, ուր բաւական ժամանակ անջնաւ պատերազմելէ վերջ, օր մը, թշնամոյն սրածայր մէկ նետին արագութեամբ մը կուրծքին զարնուիլը զգաց, բայց նետն՝ փոխանակ ծակել անցնելու, ինչպէս ինք կ'ակնկալէր, գետին չըջեցաւ անջնաս։ Հնդիկն այս բանին զարմացած էր. բայց տուն վերադառնալուն՝ գրպանը փնտռելով գտաւ որ մուրացիկին տասնոցը նետին սուր ծայրը լաւ մը փթացնելով իր կեանքը փրկած էր։ Ասոր վրայ տասնոցը մեծ պատիւ գտաւ Հնդիկին քով։

Այսպէս կատուին խօսքը իր ճշմարտութեան յանգեցաւ։ Հըպարտ ոսկի դրամը չկրցաւ մէկու մը բարիք ընել, ո՛չ ալ կրցաւ պատիւ ու սէր վայելել ուրիշէ մը։ Խեղճ տասնոցը որքան բարիքներու պատճառ եւ քանիներու կեանքը փրկեց, հետեւաբար շատ սիրելի եղաւ։

Թարգմ. Տ. Յ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

ԲԱՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մենեդեմոս Յոյն փիլիսոփան՝ Քրիստոսէ երեք հարիւր տարի առաջ կ'ապրէր։ Օր մը երբոր իրեն ըսին. «Մեծ երջանկութիւն է մարդուս իր փափաքածն ունենալը։ — Մեծագոյն երջանկութիւնն է որ ունեցածովդ գոհ ըլլալ գիտնայ մարդ», պատասխանեց փիլիսոփան, եւ իրաւունք ունէր։

ԳԻՏԱԿԱՆ ՎԵՊ

ՕԴԻ ԱՐԳՈՆԱԽՈՐԴՆԵՐԸ

(Շարունակութիւն 42րդ Թիւէն եւ վերջ)

Իրկու մարդերը զննեցին հսկայ մեքենան որու թեւերը ձողերու վրայ կը հանգչէին . երկար ժամանակ դիտեցին զայն առանց բան մը ըսելու : Թռչուններու թռիչքին լուսանկարներէն օգտուելով Մօնզօն , իր նախորդին ծրագրէն շեղած եւ աւելի թռչունի ձեւ տուած էր իր մեքենային . միայն փոխանակ հորիզոնական ու տափակ պոչ մը զննելու՝ որ կողմնակի տատանումներ պիտի պատճառէր , շարժիչ թեւը գետեղած էր մեքենային կռնակը , իսկ յառաջակողմը սրածայր կը վերջանար : Ամբողջութիւնը իլի մը ձեւն ունէր . որու ծայրերը հաստատուած էին կազի մօթօռներ . նաւակի պէս տեղ մը յատկացուած էր երկու ուղեւորներուն . առաջըր նստող անձը մեքենային ուղղութեան վրայ կը հսկէր՝ ջնարակուած ապակիէ պահպանակներու ետեւ պաշտպանուած՝ երկու կողմերն կային տափակ առագաստներ , որոնք միասին կամ առանձնակի կրնային հորիզոնական , ուղղաձիգ կամ շեղ դիրքեր առնել , նոյնպէս կծկուելով մակերեւոյթին մէկ տասներորդի չափ կրնար պզտիկնալ , Յայտնի է որ այս մեքենան չէր կարող օդին մէջ սաւառնիլ եւ կամ թռչիլ . Մօնզօն ալ գիտիր այս բանը , եւ իր ծրագիրն էր , շարժիչ թեւերուն ուժովը գետնէն մեկնելով օդին բարձրերն ելլել եւ անտի՝ ստացած արագութիւնովը՝ յենլով երկու քովնտի թեւերուն վրայ թեթեւակի վար իջնել :

Թռչուններն ալ այս դրութեամբ կը թռին օդին մէջ , սակայն անոնք ի ծննդենէ վարժուած են ու այդ շարժումներուն յատուկ կատարեալ մեքենայ մը՝ իրենց մարմինն ունին :

Մարդուն ոտքը երբ հողէն կտրի , անճարակ կենդանի մը կը դառնայ ան կարծես . մանաւանդ Մօնզօնի գործիքին համար անհաւատալի արագութիւն պէտք էր թեւերը պէտք եղածին չափ բանալու եւ յեղակարծ հովերէ գլխիվայր չդառնալու համար , եւ այս առաջին դասն որ պիտի առնէր մարդը թռչելու արուեստին մէջ մահացու կը դառնար իրեն եթէ պահ մը չփոթէր :

— Եթէ այդ դաշտին մէջ չկարենանք իջնել , ըսաւ Ուտհաուզ դանդաղ ձայնով մը :

— Սիրելի բարեկամս, չկրնալ չըլլար. անպատճառ պիտի հոն հասնինք, վստահ եղիր ատոր, ապա թէ ո՛չ...

— Հէ՛, ապա թէ ո՛չ... կրկնեց Ուտհաուզը:

×

Օրաթերթերը լուր առին եւ Մօնզօն գրեթէ հաճոյքով սկսաւ կարդալ այս կամ ասոր իմաստով լուրեր. « Հնարիչը մօտեցաւ նոր փորձ մը ընելու միտք ունի »:

Եւ յիրաւի գեղեցիկ առտու մը, ժամը տասնի կառախումբին ճամբորդները տեսան թռչող մեքենան որ աղեղէն արձակուած նետի մը պէս, փախչելով վանդակէն ուր հինգ տարիներ փակուած մնացեր էր, դէպի վեր կը բարձրանար եւ օդին բարձրերն հասնելով Բըմպլ-Հիլի բլուրին վրայ կը սրանար եւ անոր կռնակը կ'աներեւութանար: Կառախումբին մէջ ամէն մարդ ուն ու ուրուն անոր տուած էր յետին ճամբորդէն մինչեւ մեքենավարն ու հնոցպանը, առանց զգալու որ երկու, երեք կայարան կը ձգեն կ'անցնին կանգ չառնելով:

Մօնզօն մեքենան շարժման մէջ դնելէն ի վեր ո՛չ ինք եւ ո՛չ Ուտհաուզ բառ մը արտասանած էին. երկուքն ալ նստած էին ակռանին սեղմած: Շատ ցից ուղղութիւնով վեր ելան՝ եւ երբ Բըմպլ-Հիլէ կ'անցնէին, ա'լ աւելի շեշտուեցաւ մեքենային հակումը: Երբ Բիլպըրնի բլուրին ետեւը հասան, Մօնզօն անիւը դարձուց եւ մեքենան սկսաւ արագ արագ վար իջնել: Տուները կ'սկսէին խոշորնալ, երբ Մօնզօն հասկնալով պատճառն անիւը ետեւ դարձուց եւ անմիջապէս դիմացէն տեսնուած լեռներու գագաթները իջնելով իրենց ոտքին տակը կը թռչէին ըլլալ: Գամպլի, Մալտէի կայարաններէն անցած ժամանակ 300 մէթր բարձր կը գտնուէր գետնէն: Մօնզօն դարձուց անիւը եւ մեքենան բարձրացաւ խիստ ցից ուղղութեամբ. յետոյ գահավէժ էջք մը ունեցաւ Սութհ Գանդինկթընի պարտէզներուն վերեւ. բնապատմական թանգարանին աշտարակները տեսնուիլ սկսան:

Հոս, աղետարեր վարանում մը ունեցաւ Մօնզօն. այդ աշտարակներուն վրայէն բարձրանար թէ ոչ քովէն անցնէր: Անորոշ շարժում մը ըրաւ եւ թողուց ձեռքէն ուղղութեան անիւը, ամբողջական շրջան մը ընել տալէ ետքը: Մեքենան նստում մը ըրաւ եւ ուղղաձիգ դիրք մը առաւ. Մօնզօն նստած տեղէն դէպի ետ գլորեցաւ իր անկումին մէջ Ուտհաուզն ալ քաշելով:

Հայտ բարքի եւ շրջականերու բնակիչները ակնատես եղան այս արկածին: Թեւաւոր բան մը հորիզոնէն անցած եւ ահագին շրջաններ գծելով թանգարանին առջեւ հասած էր ուր անմիջական շարժումով մը ուղղաձիգ դիրք մը առած էր: Այդ պահուն


սեւ կէտ մը զատուած էր մեքենայէն ու կ'իյնար օդին մէջ ոլորտելով. մարդ մը, երկու մարդեր էին անոնք իրար փաթտուած. Ուսանողաց Գլխակին վրայ ինկան թաւալզոր և իրարմէ անջատուելով գլորեցան սալայատակին վրայ:

Պահ մը մեքենան օդին մէջ կեցաւ. յանկարծ դեղնորակ լոյս մը երեւցաւ յառաջակողմին վրայ. կազն էր որ կը բռնկէր եւ ահագին արագութիւնով մը գնաց խորտակուեցաւ Գիտութեանց Ուսումնարանին ալրաշէն տանիքին վրայ:

Ուօրջէսդըր Բարքի և Մալտէնի միջեւ դեռ այսօր իսկ կանգուն է պողպատեայ այն հսկայ շէնքը որ դիւային մեքենան պարակած էր իր կողերուն մէջ, իբր վկայ յուսահատ առաջին մարտին զոր մարդս մղեց օդին տիրանալու համար:

Թարգ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հ.-Կ. ՈՒԼԼՍ





ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԼԱՒ ԸՆԿԵՐԻ

Բանաստեղծին մէկը հետագայ գեղեցիկ այլաբանութեամբ կը յայտնէ բարի մարդոյ ընկերութեան մարդուս վրայ ըրած լաւ ազդեցութիւնը:

« Ժուռ կուգայի, կ'ըսէ, երբ ոտքիս տակ կէս չորցած տերև մը տեսայ որ անոյշ հոտ կը բուրէր: Ծռեցայ, առի, հոտուրտացի, սիրտս բացուեցաւ և իրեն հարցուցի թէ. « Դուն որ այսքան քաղցր հոտ կը բուրես՝ միթէ վաճռն Կս »:

— Ո՛չ, պատասխանեց, վարդ չեմ ես, բայց քիչ ժամանակ հետն ապրեցայ և իրմէն է բուրած անոյշ հոտս »:

Պզտիկ Գարեգին շատ կը սիրէ կառախումբով ճամբորդած ժամանակ պատուհանէն դուրս դիտել. հայրիկն ալ միշտ քովը կը կենայ որ տղան վար չիյնայ: Գիտէ՞ք, փորձանաւոր բան է գլխարկը գլուխը պատուհանէն դուրս ծռիլը. եթէ չէք գիտեր Գարեգինի հարցուցէք, որու գլխարկը հովը առեր կը տանէր: Գարեգին չուզեց գլխարկէն ըլլալ, ո՞րը գտնուիլը մոռնալով գլխարկին ետեւէն ոստում մը ըրաւ և ինքզինքը պատուհանէն դուրս գտաւ: Հայրիկը մէկ թափով տղուն գօտիէն կը բռնէ, սակայն Գարեգին ծանր էր և գօտիին կտորը հայրիկին ձեռքը մնաց:



ՏՈՒՆԿԵՐՈՒՆ, ԸՐԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թէ ինչպէս տուններն ալ կը գաղթեն ու երկար ճամբորդութիւն ընելով հեռաւոր երկիրներու մէջ ալ կը տարածեն իրենց օգտակարութիւնը, հետագայ ցանկը աղէկ կը բացատրէ .

Տորոնը (գըզըլ պոյա) Արեւելքէն ելած է :

Կարոսը (քերէվիզ) Գերմանիոնէն :

Շագանակի ծառը՝ Լիւդիաի Կաստանէա քաղաքէն :

Սոխը Եգիպտոսէն :

Ծխախոտը Վիրգինիաէն :

Լիմոնը Յունաստանէն :

Նարինջը Հնդկաստանէն, կամ ըստ ոմանց, Տիւրքիոնէն :

Ընկոյզը՝ Ասիաէն :

Ծիրանը Վանայ ջրջականերէն :

Թուզը Միջագետքէն :

Խազոզը Ասիաէն :

Յորենը Թիպէզի տափարակ լեռներէն, ուր մինչեւ հիմա կը գտնուի իր հին վիճակին մէջ եւ պղտիկ խոտի պէս կ'ածի ու մեր ցորեններէն շատ աւելի պղտիկ հատեր ունի :

Բրինձը Հարաւային Ափրիկէէն, ուրկէ ամէնէն առաջ Հընդկաստան անցաւ :

Վարսակը Հիւսիսային Ափրիկէէն :

Հաճաքը Սիպերիաէն :

Կարոսը (մաղտանոս) Սարտենիաէն :

Տանձի եւ խնձորի ճառերը՝ Եւրոպայի տուններ են :

Շոմինը (սպաննագ) Եւրոպիաէն ու Փոքր Ասիաէն :

Կրեւածաղիկը Բերուէն :

Թթենին ու դեղձի ծառը Պարսկաստանէն :

Կաղինը Պոնտոսէն :

Վարունգը Հնդկաստանէն :

Սերկիւիլը Կրետէ կղզիէն :

Բողկը (թուրը) Զինաստանէն ու Ճաբոնէն :

Ոլունը (պեղելիա) Եգիպտոսէն, նոյնպէս եւ Սինիոնը, որ յունական Արչիպելագոսին մէջ ալ կը գտնուէր :

Ջրկոտեմը (սու թէրէսի) Կրետէ կղզիէն :

Կանեփը՝ Հնդկաստանէն ու Պարսկաստանէն :

Վայրի ստեպլինը՝ Արաբիաէն :

Դդմենին Լիւանիքէն :

Գետնախնձորը բերուէն , Պրազիլիաէն ու Մեքսիկաէն ,
Հաղարչը (Ֆրէնկ իւզիւմիւ) եւ Փշալից խաղողը (թիֆէն իւ-
զիւմիւ) Հարաւային Եւրոպայի տունկեր են :

Կաղամբը վայրենի վիճակին մէջ կը գտնուի Սիկիլիաի եւ
Նէապոլսոյ շրջակայքը :

Սեւ ցորենը Սիպերիայէն ու Թաթարիստանէն եկած է :

Կորեակը (տարը) Հնդկաստանէն ու Եթովպիաէն :

Գարին վայրենի վիճակին մէջ գտնուած է Հիմալայա լեռնե-
րուն մէջ :

Հուլլոնը , Մանանեխն ու Չամանը Գերմանիաի յատուկ են :

Սալորը Ասորիքի մէջ գտնուած է :

Կեռասը Պոնտոսէն բերուած է :

Զիթենին ու Նշենին Փոքր Ասիաէն :

Շողգամն ու Ճակնդեղը Միջերկրականի ափունքէն :

Ստեպղինը ըստ հաւանականագոյն կարծեաց Ասիաէն :

Կանկառը (էնկինար) Սիկիլիաէն :

Գագաօն՝ Մեքսիկաէն :

Լուբիան Հնդկաստանէն :

Ոսպը Ասիաէն :

Թէյը Չինաստանէն :


Սեխն ու Զմեռուկը Արեւելքէն :

Գինձը վայրենի վիճակի մէջ կը գտնուի Միջերկրականի ա-
փունքները :

Շուշանը Ասորոց երկրէն :

Մեխակը Իտալիայէն :

Կակաչը Կապադովիայէն :



ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱԻԱՌԻՆ ՄԷՋ

(ՈՒ ՍՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Բ .

Յայտնի է թէ, գաւառներուն մէջ մանաւանդ , լրագրէ ու
գրքէ հասկցողները շատ փոքր թիւ մը կը կազմեն , բացարձա-
կապէս անուս ամբոխի մը հանդէպ . Սպասելով որ առաջիններուն
թիւն հետզհետէ աճի եւ գերազանցէ միւսները , հիմա կը տես-

ներնք թէ՛ մամուլին դերը, թէեւ չա՛տ ազդեցիկ եւ օգտակար, սակայն խիստ նեղ շրջանակի մը մէջ կը սահմանափակուի. ու հետեւաբար անոր տակաւ զարգացումին բովանդակ արդիւնքը՝ այդ միեւնոյն սահմաններուն մէջ միայն պիտի պտղաբերի:

Ասկէց հաշուելու է թէ, գործելու ի՞նչ ընդարձակ ասպարէզ մը եւ արդիւնաւոր պաշտօնավարութեան որքա՛ն ստիպողական հարկ մը կը ծանրանայ մեր կղերին ուսերուն:

Գիտութիւնը գաւառներու մէջ տարածելու գործը կղերն է որ պիտի ընէ, ինչպէս ըսինք, լրագրէ հասկցողներու ցանցաւ դասակարգին հանդէպ՝ ահագին համայնքներ ունինք որոնք եկեղեցւոյ բեմէն, միայն բեմէն կրնան սպասել ամէն զարգացում: Ու իր պաշտօնին գիտակից կղերը կրնայ զգալ թէ առանց մտաւորական զարգացումի՝ կրօնական բոլոր քարոզութիւնները, բռնազանցական բոլոր ընդլայնումները՝ ուրիշ ո՛չ մէկ բանի կը ծառայեն եթէ ոչ արդէն մըլոտած, տգէտ միտքերու հորիզոնն նախապաշարումի թանձր ամպերով մթագնելու: Չէ՞ որ առանց հողը պատրաստելու, վասնուած սերմին արդիւնքը տատասկներու եւ մոլաբոյսերու մէջ կը խեղդուի:

Կուսակրօն կղերը, պարբերական քարոզներուն կրնայ տալ լուրջ ու բեղմնաւոր ուղղութիւն մը, դուրս ձգելով բոլոր այն բանջոտած բանաձեւերն, որոնք մտաւորական լճացումի ամէնէն բացայայտ ախտանիշերն են: Անոնք որ Աստուածաշունչը սո՛սկ բնազանցական գիրք մը կը կարծեն եւ անկէ բղխելիք քարոզներուն միշտ վերացիկ հանգամանք մը կը վերագրեն, չա՛տ կը սխալին: Տգէտ տիրացուներու կամ անկարող շղերականներու կեղաւարծ չքմեղանքն է այդ. ժողովուրդին կեանքը խորապէս ուսումնասիրող ու միանգամայն Ս. Գրոց բովանդակ փիլիսոփայութեան թափանցող ուսեալ եկեղեցական մ'այդպէս չի՛ կրնար խորհիլ: Աստուածաշունչը տեսակ մը մշտնջենական հանրագիտարան է աւելի, համայնագիտական գանձերով ակադճուն որոնց մէջ մարդկութեան կեանքն ամբողջ կը պարզուի, հոգեկան, մտաւորական ու ֆիզիքական յարակից երեւոյթներով: Քարոզիչն անոնցմէ անսպառ նիւթեր, ներշնչումներ ունի քաղելիք, ժողովուրդի կենսական պէտքերէ իւրաքանչիւրին յարմար: Գաւառական բեմերը, սակայն, այսպիսի ակնկալութիւններ չէ՛ որ կ'արդիւնաւորին: Սո՛սկ բառերու տեղափոխում մըն է, որ տարին տասներկու ամիս տրուած քարոզներն իրարմէ կը տարորոշէ: Յանկերգները նոյնն են, անխմաստ, տափակ ու ձանձրացուցիչ, որոնք երկու կարգի կը բաժնուին. 1. — Սրբազան յատուկ անուններու անգիտակից արտասանութիւն մը, սովորական անկապ

բանաձեւերով խառնուած, ռամիկ խելապատակներու հմայքը գրաւելու իբրեւ զիւրին միջոց, որուն կ'ապաստանին ամէնքն ալ, աղքատ մտաւորական վարկը՝ շինծու սեթեւեթներով փրկելու համար:

2. Առածի կարգ անցած «Տուէ'ֆ, Տուէ'ֆ» ըւ Ահա՛ առանցքներ, որոնցմէ մէկին կամ միւսին շուրջ կը դառնան պարբերաբար՝ գաւառական ըմբերու եկեղեցական քարոզութիւնները: Սակայն, սո՛ւրբ հայրեր, անոնք որ կուգան ժամեր տեւող ձեր քարոզները լսելու, իրական պէտքեր ալ ունին, կեանք մը կ'ապրին, որու բազմաճիւղ սլահանջումներուն անտեղեակ են: Ձեր պարտքն է բացատրել, ծանօթացնել իրենց այդ բոլորը: Գիտական լուրջ ծրագրում մըն է որ օգտակար պիտի դարձնէ ձեր խօսելիքները: Հասարակութիւն մը զարգանալու համար, ամէն բանէ առաջ գիտակ ըլլալու է հոգիին ու նիւթին, բարոյականին ու ֆիզիքականին ամենասերտ և անժխտելի առնչութիւններուն, որոնց մէկն իսկ անտեսել անկարելի է առանց վնասելու միւսին: Իւրաքանչիւր անհատէ սպասելու համար հանրագումար գործերու յօժարակամ մասնակցումը, նախ սորվեցուցէ՛ք տնտեսապէս բարգաւաճելու նպաստող պայմանները, ցոյց տուէ՛ք ճշմարիտ բարեկեցութեան աղբիւրները, որոնցմով ամէն ոք ամէն ոք ատակ պիտի ըլլար գիտակցօրէն ու դրապէս պատասխանելու ձեր «Տուէ'ք, Տուէ'ք» հրաւերին ալ: Եւ անոնց հետ չեղտեցէ՛ք ֆիզիքապէս ինքզինքը խնամելու անհրաժեշտ հարկը, որուն գոհացումէն միայն կարելի է յուսալ հոգեկան ու բարոյական առողջ տրամադրութեանց կատարելագործումը:

Քահանաները մանաւանդ, ի՛նչ մեծ դեր կրնան կատարել գիտութիւնը ռամկացնելու գործին մէջ: Մէկ կողմէն իբրեւ կրօնական՝ իրենց պաշտօնին կապուած դարաւոր պատկառանքը միեւնոյն ատեն բանգէտ-ուսեալի համբաւ մըն ալ կցելով ամէնէն ռամիկ տէրտէրին անունին իսկ, միւս կողմէ տուններու, ընտանիքներու մէջ անոնց ազատ մուտքն ու երթեւեկը՝ անհամեմատ դիւրութիւններ կ'ընձեռնեն իրենց հոգեւոր միջնորդութիւններու զուգընթաց՝ գործնականօրէն ալ սատարելու պատահական պէտքերուն, կենսական կամ արհեստական լուրջ խրատներով:

ԱՇՈՒՆ

Զինչ կապոյժ մեր կ'անհետի երկնից երես,
 Զիս զըրկելով անյագօրէն ժրպիսներես.
 Տըժգոյն բոց մը՝ հասնող սիրս մը՝ ծիածանին
 Վառ գոյներով դրասանգներն կը ծածանին:

Այրող սապը՝ կիզիչ արեւ՝ հորիզոնէն,
 Զերդ շիկնող կոյս խելայեղած ու սրտմօրէն,
 Խոյս տալ անվերջ փըշող սասիկ փոքորիկէն,
 Երբ ճառագայթն արեւաւսոյր կը մտնակեն:

Թըռչունները հոլաթեւեան ու խուսափուկ,
 Ճարահասեալ — չի գրտնելով վայր մը փափուկ —
 Կը սըրանան եթերին մէջ երամովին,
 Տափ երկիրներ դիմեն՝ յաղթեն անգուսպ հովին:

Պըտուղներու առասուրբեան սահման չը կայ,
 Եւ խաղողի ողկոյզներն՝ ուր մօտակայ
 Այգիները կըրեն, քամեն սաքի գոյնով,
 Կլորիկ հասով, սիրուն տեսով են որբին քով:

Խիտ խիտ ամպեր մեր կը ծածկեն երկնից երես,
 Կասեցնելով զիս շուտ ընդ փոյթ ճախրանքներես.
 Փայլուն բոց մը՝ այրող սիրս մը՝ արեգական
 Արեւոյսի վառ երանգներն հագիւ տկան:


Տիարպէրիր

ՄԻՀՐԱՆ ՊԱՍԹԱՃԵԱՆ




ՍՈՍԿԱԼԻ ԳԱՂԱՓԱՐ ՄԸ

Մարդու համար մահերու սոսկալին չէ՞ միթէ մեռած կարծուելով ողջ ողջ թաղուիլն։ Եւ ամէնէն գէշն՝ ասանկ արկածի մը դէմ ո՞ր եւ է պահպանուելու միջոցը շունինք դեռ։ Գիտութիւնը ցուցուցած է եւ փորձով ալ հաստատուած թէ՛ մարդիկ կրնան երկար ատեն մարած վիճակի մէջ մնալ, առանց շնչառութեան, առանց սրտի զարկի, յար եւ նման բնական մեռեալի մը։



Ռուսիացի ազնուական մը՝ կնկան մը թաղումին ներկայ կը գտնուէր, դադաղն արդէն փոսն իջեցուցած էին եւ վերջին աղօթքին հետ հողը վրան ծածկելու սկսած էին, երբ զարհուրելի աղաղակ մը սարսափեցուց յուզարկաւորներն։ Կինը՝ որ մարած վիճակի մէջ կը գտնուէր՝ դադաղին վրայ իյնող հողին աղմուկէն արթննալով՝ ազէկտուր ճիչեր կ'արձակէր։ — Այս տեսարանը մեծ տպաւորութիւն մը բրաւ ազնուականին վրայ։ Եւ անկէ ետքը իր դիրքն ու հարստութիւնը գործածեց միջոց մը գտնելու որով այլ եւս մարդիկ այս սոսկալի սխալումին չզոհուին։

Երկար փորձերէ ետքը՝ հետեւեալ գործիքն հնարեց։ Հողա-
կոյտին վրայ դրուած է լաւ գոցուած տուփ մը՝ որ դաճաղին հետ
կը հաղորդակցի լայն խողովակով մը։ Այս խողովակին մէջ գե-
տեղուած զսպանակի մը մէկ ծայրը կապուած է դուրսը դրուած
տուփին, իսկ միւսը կ'իջնէ մինչեւ դիակին գլխուն մօտ։ Դաճա-
ղին մէջ եղած ամենամոքր շարժում մը, նոյն իսկ պոռալու ձայնը
զսպանակը շարժելով՝ տուփին կափարիչը կը բացուի եւ մէկ ու
կէս մէթր երկայնութեամբ ձող մը կը ցցուի, որուն ծայրն աչքի
զարնելիք նշան մը կապուած է։ Միեւնոյն ժամանակ ելեք-
տրական զանգակ մը կ'սկսի տեւական կերպով հնչել եւ լապտեր
մը կը վառի։ Այս նշաններն բաւական են գերեզմանի պահպա-
նին ուշադրութիւնն հրաւիրելու կարծեցեալ ննջեցեալին վրայ եւ
պէտք եղած օգնութիւնը անմիջապէս տալու։



Հանրագիտակի **39**րդ թիւին մէջ առաջարկուած « Դժուար
բաժանում մը » մտամարդական հարցումին պատասխանն է.

Առջինեկը առաւ 7, 8, 15 և 16 բաժինները. — Երկրորդը
առաւ 5 և 6. — Երրորդը առաւ 4, — Հայրերնին գնած էր 7
բաժին։

Թիւ 1 Մտամարդային հարցումին լուծումն է

ՓԵՏՈՒՐ ԳՐԻԶ

Իսկ 2րդ հարցումին պատասխանն է

ԳԼՈՒԽ ՇԱՔԱՐ



ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ**

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն Ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Քօնսերը. — Ագահութիւն. — Պարահանդէսը ինը տարի առաջ (Քանազող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխոհեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուիլերմս եւ կայծակը. — Քսան եւ ... դարու հաշ մը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի օրը. — Հարսի մը պատրանք (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու աեղ. — Նշանաւոր միակեանքներ. — Մխիթարական բուրբ յօռեռես բարեկամիս (Քասիմ). — Ներկագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Ցաւին դարձանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Այնքան առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գտնող պարոնը. — Տոմսակնիդ, պարոնայ. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակադրօշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթ. — Քորնիշոնի երազը. — Մեղրալուսնի նամբորդութիւն. — Մայր ու տղայ. — ԱԿՆՅԻ ՍԱՐԱՆ ՄԸ. — Դիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասեղին. — Քսան բարալով աշխարհիս ոսկին. — ԹԲԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐ եւայլն, եւայլն.

Գինն է 5 Դանեկան. — Դաւառները՝ բոլորսարով 6 Դանեկան
Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս գնողներուն վեցերորդ մը նուէր կը տրուի

ԻՄՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՈՆԱՏԵՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր Ալի նատտէսի, Թիւ 38

THE UNIVERSITY OF CHICAGO

1900-1901

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

The University of Chicago is a private research university in Chicago, Illinois. It was founded in 1837 as the first American university to be organized on the basis of the European model, and is one of the leading universities in the United States. The university is known for its commitment to academic excellence and its role in the development of modern higher education. It has a long history of producing influential scholars and leaders in various fields of study. The university's campus is located in the Hyde Park neighborhood of Chicago, and it is home to a large and diverse student body. The university's research programs are world-renowned, and it has a strong reputation for its contributions to knowledge and scholarship. The University of Chicago is a member of the Association of American Universities and is a founding member of the Ivy League. It is also a member of the Association of Research Universities and the Association of Private Universities. The university's commitment to academic excellence and its role in the development of modern higher education have made it one of the most respected and influential universities in the world.

The University of Chicago is a private research university in Chicago, Illinois. It was founded in 1837 as the first American university to be organized on the basis of the European model, and is one of the leading universities in the United States. The university is known for its commitment to academic excellence and its role in the development of modern higher education. It has a long history of producing influential scholars and leaders in various fields of study. The university's campus is located in the Hyde Park neighborhood of Chicago, and it is home to a large and diverse student body. The university's research programs are world-renowned, and it has a strong reputation for its contributions to knowledge and scholarship. The University of Chicago is a member of the Association of American Universities and is a founding member of the Ivy League. It is also a member of the Association of Research Universities and the Association of Private Universities. The university's commitment to academic excellence and its role in the development of modern higher education have made it one of the most respected and influential universities in the world.

The University of Chicago is a private research university in Chicago, Illinois. It was founded in 1837 as the first American university to be organized on the basis of the European model, and is one of the leading universities in the United States. The university is known for its commitment to academic excellence and its role in the development of modern higher education. It has a long history of producing influential scholars and leaders in various fields of study. The university's campus is located in the Hyde Park neighborhood of Chicago, and it is home to a large and diverse student body. The university's research programs are world-renowned, and it has a strong reputation for its contributions to knowledge and scholarship. The University of Chicago is a member of the Association of American Universities and is a founding member of the Ivy League. It is also a member of the Association of Research Universities and the Association of Private Universities. The university's commitment to academic excellence and its role in the development of modern higher education have made it one of the most respected and influential universities in the world.

The University of Chicago is a private research university in Chicago, Illinois. It was founded in 1837 as the first American university to be organized on the basis of the European model, and is one of the leading universities in the United States. The university is known for its commitment to academic excellence and its role in the development of modern higher education. It has a long history of producing influential scholars and leaders in various fields of study. The university's campus is located in the Hyde Park neighborhood of Chicago, and it is home to a large and diverse student body. The university's research programs are world-renowned, and it has a strong reputation for its contributions to knowledge and scholarship. The University of Chicago is a member of the Association of American Universities and is a founding member of the Ivy League. It is also a member of the Association of Research Universities and the Association of Private Universities. The university's commitment to academic excellence and its role in the development of modern higher education have made it one of the most respected and influential universities in the world.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՄԷՆԷՆ Ժողովրդական, ԱՄԷՆԷՆ Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅԸ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ի՞նչ է Բօնեքը. — Ագահութիւն. — Պարահանդէսը ինք տարի առաջ (Բանագող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. — Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ ես չեմ յաջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հանեան). — Անխոհեմ հարցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուիլերմս եւ կայծակը. — Բաւն եւ ... դարձի հաշ մը. — Կրօններու պատմութիւնը. — Այծեամի օրը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշխարհիս վրայ միայն կենալու տեղ. — Կշմուռու միակերպներ. — Մխիթարական բուրք յոռետես բարեկամիս (Քասիմ). — Նրկրագործական Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարձանը. — Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ակամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամանայ մը գտնող պարսեր. — Տումակնիդ, պարոնայի. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակադրոշմի լեզուն. — Զուարճալի դատաստան. — Թօթ. — Գործնիշոնի երազը. — Մեղրալուսնի նամբորդութիւն. — Մայր ու տղայ. — ԱԿՆՅԻ ՍԱՐԱՆ ՄԸ. — Գիւղերու համար. — Դրամագլուխ եւ Աշխատութիւն. — Կեռասենին. — Բաւն բարայով աշխարհիս ոսկին. — ԹԻՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առածներ ու ԶՈՒԱՐՃԱԼԻԲՆԵՐ եւայլն, եւայլն.

Գինն է 5 Դանեկան. — Գաւառներ՝ քղբասարով 6 Դանեկան

Հանրագիտակի բոլոր Գործակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս զնոցներուն վեցերորդ մը նուէր կը տուի